ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<29>> 05 2012թ. N: 72 ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ 2011-2012 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԵԴԱԼԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ <<ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ>> , <<ՄԱԹԵՄԱՏԻԿԱ>> ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012 թվականի մայիսի 3-ի N 388-Ն հրամանով հաստատված <<Ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում 120, 200 ժամ բացակայած սովորողի հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի>> 54-րդ կետի դրույթները.

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի 2011-2012 ուսումնական տարվա մեդալի հավակնորդ շրջանավարտների <<Հայոց լեզու և հայ գրականություն>>, <<Մաթեմատիկա>> առարկաների պետական ավարտական քննությունների նախապատրաստման և անցկացման հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. 2011-2012 ուսումնական տարվա մեդալի հավակնորդ շրջանավարտների <<Հայոց լեզու և հայ գրականություն>>, <<Մաթեմատիկա>> առարկաների պետական ավարտական քննությունները կազմակերպել և անցկացնել <<Գյումրու թիվ 3 ավագ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում:

Ա. ԳԻՋԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետի 2012 թվականի
մայիսի 29 - ի թիվ 92 կարգադրության

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ 2011-2012 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԵԴԱԼԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ <<ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ>>, <<ՄԱԹԵՄԱՏԻԿԱ>> ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Սահակ Մինասյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ, նախագահ,
Ջեմմա Զայիմցյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ, անդամ,
Կարեն Դարբինյան	<<Գյումրու թիվ 3 ավագ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ, անդամ,
Անահիտ Իկիլիկյան	<<Գյումրու թիվ 3 ավագ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցիչ, անդամ :

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ. ՊՈՂՈՍՅԱՆ